



# Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ

Ծաղկաշարի  
24 ՄԱՐՏ 2024

## ԸՆԹԵՐՑՈՒՄ ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (9.9-17)

**Մ**եծապէս ուրախացի՛ր, Սիոնի՛ բնակիչ, ցնծութեամբ աղաղակէ՛, բնակի՛չ Երուսաղէմի. ահա թագաւորդ քեզի կու գայ արդարութիւն եւ փրկութիւն բերելու. որպէս հեզութեան նշան՝ նստած իշու վրայ, դեռ մատղաշ աւանակի վրայ: Անիկա Եփրեմի երկրէն պիտի անհետացնէ պատերազմի կառքերը, Երուսաղէմէն պիտի վերացնէ պատերազմի ձիերը. պատերազմի աղեղը պիտի խորտակէ եւ խաղաղութիւն պիտի յայտարարէ ժողովուրդներուն: Անիկա իր իշխանութիւնը պիտի տարածէ ծովէ ծով, Եփրատ գետէն սկսեալ մինչեւ ծայրերն աշխարհի: Գալով քեզի, Տէրը այսպէս կ'ըսէ. «Քանի արիւնով ուխտ կնքեցի հետդ, գերեվարուած քու եղբայրներդ պիտի ազատեմ անջրդի անապատին խորերէն: Երուսաղէմ վերադարձէք, ո՛վ գերիներ, որ յոյսով կը սպասէք. ահա կը յայտարարեմ, թէ ձեր աքսորի ժամանակաւոր զրկանքներուն փոխարէն՝ կրկնապատիկ բարիքներով պիտի հատուցանեմ ձեզի: Ինծի համար Յուդան

Այո՛, Տէրը ինք վերակացու պիտի ըլլայ անոնց վրայ. անոր նետը փայլակի պէս պիտի հարուածէ:

պիտի լարեմ աղեղի պէս, իսկ Եփրեմը՝ նետի պէս. զաւակներդ հեթանոսներուն դէմ պիտի հանեմ, ո՛վ Սիոն, եւ քեզ ձեռքիս մէջ պիտի բռնեմ պատերազմիկ զինուորի պողպատեայ սուրին նման»: Այո՛, Տէրը ինք վերակացու պիտի ըլլայ

անոնց վրայ. անոր նետը փայլակի պէս պիտի հարուածէ: Տէրը, Ամենակալ Աստուածը փող պիտի հնչեցնէ եւ թշնամիներուն դէմ պիտի քալէ՝ մրրիկի պէս սպառնալից: Ամենակալ Տէրը ինք պիտի պաշտպանէ իր ժողովուրդը եւ անոնք պիտի բնաջնջեն թշնամիները զանոնք պարսատիկներու քարերուն տակ թաղելով. անոնց արիւնը պիտի խմեն որպէս գինի եւ անոնց արիւնով տաշտեր պիտի լեցնեն, այնպէս՝ ինչպէս կ'ընեն զոհասեղանին վրայ: Այն օրը Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը այնպէս՝ ինչպէս հովիւ մը կը փրկէ իր սեփական հօտը. եւ անոնք թանկագին քարերու պայծառութեամբ պիտի փայլին Աստուծոյ երկրին մէջ. երկիր մը՝ ամէն բարիքներով ու գեղեցկութեամբ լեցուն, ուր երիտասարդները ցորենով պիտի աճին եւ կոյսերը՝ անուշարար գինիով:

Այն օրը Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը այնպէս՝ ինչպէս հովիւ մը կը փրկէ իր սեփական հօտը...:

## ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (4.4-7)

**Մ**իշտ ուրախ եղէք Աստուծով. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք: Բոլորին հանդէպ հեզ եւ ազնիւ եղէք: Շուտով Տէրը կու գայ: Որեւէ բան թող չմտահոգէ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհունակ սրտով Աստուծոյ խնդրեցէք ինչ բանի որ կարիքը կը զգաք,

Բոլորին հանդէպ հեզ եւ ազնիւ եղէք:

եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ մտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սրտերն ու մտքերը, որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**  
**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ**  
**ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ**  
(20.29-21.17)

**Ե**րբ Յիսուս եւ իր աշակերտները Երիքովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրեն: Ծամբու եզերքին նստած երկու կոյրեր, երբ լսեցին որ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Յիսու՛ս,

«Ողորմէ՛ մեզի, Յիսու՛ս, Դաւիթի որդի»:

Դաւիթի որդի»: Ժողովուրդը սաստեց անոնց որպէսզի լռեն, բայց անոնք աւելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի որդի»:

Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեզի»:

Անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»:

Յիսուս գլխաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան իրեն:

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփազէ, Զիթենեաց լերան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը զրկեց՝ անոնց պատուիրելով. «Գացէք սա դիմացի գիւղը եւ հազիւ այնտեղ մտած կապուած էջ մը պիտի գտնէք իր աւանակին հետ. քակեցէք եւ ինծի բերէք: Եթէ մէկը առարկէ, ըսէք. “Տէրը անոնց պէտք ունի”, եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի»:

Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականանայ մարգարէին խօսքը.

“Երուսաղէմի ըսէ՛.  
Ահա քու թագաւորդ քեզի կու գայ.

Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ”:

Աշակերտները գացին եւ կատարեցին ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին էջն ու

աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ոտներ կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր.

... օրհնեալ է ան որ կու գայ Տիրոջ անունով:

“Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին, օրհնեալ է ան որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնութի՛ւն Բարձրեալին”:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դղրդեցաւ: «Ո՞վ է ասիկա», կը հարցնէին քաղաքի բնակիչները. եւ ամբողջը կը պատասխանէր. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն»:

Ապա Յիսուս տաճար մտաւ եւ դուրս վճռեց բոլոր անոնք որոնք տաճարին մէջ առուծախ կ'ընէին. լուսնափոխներուն սեղանները եւ աղանեղավաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. «Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. “Դմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի”, մինչ դուք զայն աւազակներու որջի վերածած էք»:

Տաճարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր եւ կաղեր եւ ան բժշկեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տաճարին մէջ կը գոչէին. “Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին”, բարկացան եւ Յիսուսի ըսին. «Կը լսե՞ս ինչ կ'ըսեն ատոնք»:

Յիսուս պատասխանեց. «Այո՛, չէ՞ք կարդացած սուրբ գիրքին սա խօսքը, թէ “Մանուկներու եւ կաթնկեր երեխաներու բերնով գովեստ հիւսեցիր”:

Ապա Յիսուս ձգեց զանոնք եւ քաղաքէն դուրս ելաւ՝ դէպի Բեթանիա, եւ հոն գիշերեց:

# ԱՐԱԳ ՇԱԲԱԹ 2024

**1.- Կիրակի, 24 ՄԱՐՏ**

**ԾԱՂԿԱԶԱՐԴ**

**Ժամերգոհոթին՝ 9.30-ին**

**Ս. Պատարագ՝ 10.30-ին**

**Մանուկներու Թափօր՝**

**10.45-ին եւ 11.15-ին**

**Դռնբաժէր արարողոհոթին՝ 17.00-ին**

**2.- Երեքշաբթի, 26 ՄԱՐՏ**

**Երեկոյեան ժամերգոհոթին**

**(«Տաւր ԿոհանաՅ»)՝ 19.00-ին**

**4.- Ուրբաթ, 29 ՄԱՐՏ**

**Խաճելոհոթեան եւ Թաղաւան**

**ժամերգոհոթին՝ 19.00-ին**

**3.- Հինգշաբթի, 28 ՄԱՐՏ**

**Ս. Պատարագ՝ 10:30-ին**

**Ս. Հարորոհոթին՝ 11.30-ին**

**Ոսալոհայր արարողոհոթին՝ 18.00-ին**

**Խախարաւան ժամերգոհոթին՝ 19.30-ին**

**5.- Շաբաթ, 30 ՄԱՐՏ**

**Աստոհաժաւաւան ընթերՅոհաներ՝**

**17.30-ին,**

**ԸնթերՅոհաները կը կատարեն**

**Ս. Յակոբ Կրոհակօրեայ դորոՅօր**

**աւակերս/աւակերսոհեհներ**

**եւ «Նոր Ծաղոհ»ի աղոհաներ**

**Ս. Պատարագ՝ 18.00-ին**



## Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆ

Կիրակի, 31 ՄԱՐՏ

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ՝ 9.30-ԻՆ

Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ 10.30-ԻՆ

ԿՐ ՊԱՏԱՐԱԳԷ ՈՒ ԿՐ ԲԱՐՈՉԷ

Հոգ. Տ. ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԵԱԳՈՒՊԵԱՆ

Ս. ՀԱՊՈՐԴՈՒԹԻՒՆ՝ 12.00-ԻՆ

## ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 1 ԱՊՐԻԼ 2024

ՀԱՆԳՈՒՅԵԱՂԱԵՐՈՒ ԸՐՐԻՄԱԵՐՈՒ ԱՅԾԵՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ՝  
ՀԵՌԱԶԱՂԱԵՂ ՀՈՎՐԻՆ. 514 909 5203